# ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

## ԴԱՍ 1.10. Հարավային Եվրոպա: Տնտեսությունը

• • •

Հարավային Եվրոպայի ***էներգետիկան*** կողմնորոշված է դեպի ներմուծվող վառելիքային ռեսուրսները, հատկապես՝ նավթը և բնական գազը, որը ստացվում է Հյուսիսային Աֆրիկայի և Հարավարևմտյան Ասիայի երկրներից: Նավթավերամշակման խոշոր ձեռնարկությունները տեղաբաշխված են տարածաշրջանի նավահանգստային քաղաքներում: Էլեկտրաէներգետիկայի արտադրանքի 40–80%-ը բաժին է ընկնում ջէկ-երին, Իսպանիայում, Պորտուգալիայում և Բալկաններում մինչև 3/5-ը՝ ջրէկ-ներին, Իտալիայում և Իսպանիայում կան նաև ատէկ-ներ:

• • •

Թուջի և պողպատի ստացման մետաղաձուլական խոշոր կոմբինատները գտնվում են Իտալիայում, Իսպանիայում: Բավական արագ է զարգանում ***մեքենաշինությունը:*** Բազմաճյուղ և բարձր զարգացած մեքենաշինություն ունեն հատկապես Իտալիան և Իսպանիան: Վերջին տասնամյակներում ճյուղը բարձր տեմպերով զարգանում է նաև մյուս երկրներում: Զարգացած է տրանսպորտային մեքենաշինությունը՝ երկաթուղային վագոնների, էլեկտրաքարշերի, նավերի, ավտոմեքենաների («ՖԻԱԹ») արտադրությունը:

***Քիմիական արդյունաբերության*** կառուցվածքում կարևոր տեղ են գրավում նավթաքիմիան, դեղագործությունը, պլաստմասսաների, հանքային պարարտանյութերի արտադրությունը:

***Շինարարական ինդուստրիան*** ունի բավական հարուստ հումքային բազա և թողարկում է բազմատեսակ արտադրանք: Այստեղ ավելի շատ ցեմենտ է արտադրվում, քան Գերմանիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում միասին վերցրած:

• • •

Միջերկրական ծովը Ջիբրալթարի նեղուցով կապված է Ատլանտյան օվկիանոսին, Սուեզի ջրանցքով, Կարմիր ծովով՝ Բաբ էլ Մանդեբի նեղուցով Հնդկական օվկիանոսին, Դարդանելի նեղուցով, Մարմարա ծովով և Բոսֆորի նեղուցով՝ Սև ծովին: Զբոսաշրջության հետ կապված զարգացած են «հյուրընկալության ինդուստրիայի» ճյուղերը: Դրա մեջ մտնում են հուշանվերների, խաղալիքների, զբոսաշրջային լայն սպառման ապրանքների արտադրությունը:

Հարավային Եվրոպայի երկրներում ***ծառայությունների ոլորտի*** բաժինը շարունակում է աճել, սակայն այն դեռ զիջում է Արևմտյան և Հյուսիսային Եվրոպային: Նոր թափ են ստանում ներքին և արտաքին առևտուրը, առողջապահությունը, կապն ու լրատվությունը:

Բավական ընդարձակ է Հարավային Եվրոպայի երկրների ***արտաքին տնտեսական կապերի աշխարհագրությունը***: Դրանում ևս բացառիկ դեր ունի Միջերկրական ծովը, որով իրականացվում են Եվրոպայի և Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և Ավստրալիայի, նաև Ամերիկայի միջև բեռնափոխադրումները:

• • •

***Արդյունաբերության*** կառուցվածքում գերակշռում են վերամշակող ճյուղերը: Այն ավելի բազմաճյուղ է Իտալիայում և Իսպանիայում: Վերջինս աչքի է ընկնում նաև հզոր հումքատար արտադրությամբ: Տարածաշրջանը մատակարարում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 7%-ը, երկու անգամ ավելի, քան՝ Աֆրիկա աշխարհամասը: Տարբեր ճյուղերի զարգացման համար կարևորվում են ոչ միայն հանքային հումքը, հատկապես՝ նավթն ու գազը, այլև գյուղատնտեսական արտադրանքը՝ խաղողը, ձիթապտուղը, ցիտրուսները:

• • •

*Անասնապահության* դերը մեծ չէ: Այն հիմնականում էքստենսիվ ուղղություն ունի, բացառությամբ Իտալիայի հյուսիսային շրջանի: Տարածաշրջանը զգալի քանակությամբ անասնապահական մթերքներ է ներմուծում:

Զարգացած են ***տրանսպորտի*** բոլոր տեսակները, բացառիկ դեր ունի ծովայինը, որին բաժին է հասնում արտաքին առևտրի 4/5-ը: Աննախադեպ զարգացել է ավտոմոբիլային տրանսպորտը:

• • •

Հարավային Եվրոպայի թե՛ տնտեսական, թե՛ մշակութային զարգացումը պատմականորեն սերտորեն կապված է ***Միջերկրական ծովի*** հետ: Նրա մերձափնյա տարածքը հազարամյակներ շարունակ եղել է մարդկային քաղաքակրթության ամենանշանավոր կենտրոններից: Նրա ափերին են ձևավորվել ու զարգացել Հին աշխարհի այնպիսի մշակույթներ, ինչպիսիք են Հին Եգիպտոսինը, Հունաստանինը, Հռոմինը: